

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԵՀՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ  
ՀԻՇՍՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ**

Սասնիւրաւսկին գտնում էր, որ երկու կարգի են բաժանւում ար-  
վեստագետները. նրանք, որոնք արվեստի մեջ սիրում են իրենց, և  
նրանք, որոնք իրենց մեջ սիրում են արվեստը: Հովհաննես Մասեհյանը  
պատկանում է այս վերջին խմբին, այն ընտրչալների թվին, որոնք  
իրենց գոյութիւնը հասկանում են միայն արվեստին ծառայելու մեջ և  
դրանից բացի ուրիշ կյանք չեն պատկերացնում: Ողջ էութեամբ նախ-  
ված լինելով Շեքսպիրին, Շեքսպիրի հայացքած շնքը կանգնեցնելու  
համար անհասանելի երազանքին,— նա ապրել է երկու կյանքով. մեզ  
համար, որ արտահայտվել է իր անդուզական թարգմանութիւնների մեջ  
և իր համար, որ ընդմիշտ անհայտութեան մեջ է մնացել ոչ միայն մեզ  
համար, այլև իր բարեկամների:

Ահա թե ինչու առաւել թանկ է նրա կյանքը՝ գտնված թեկուզ ամե-  
նաընդհանուր թվերով ու թվականներով: Ոչ թե իսկապես անձնական  
կյանքը, որ նա թաքցրել է ճշմարտականին մոտեցող մի կենցաղի  
մեջ (թեև մշտական վարել է դիվանագետի լուրջ մի պաշտոն), այլ հենց  
գրական, այն, որ հայտնի է մեզ իր հրատարակած թարգմանութիւն-  
ների տարեթիւերով և հայտնի է դարձյալ եւրոպական այս կամ այն  
մայրաքաղաքում պաշտոնավարելու հանգամանքով, որից մենք դար-  
ձյալ տվյալ լեզվի իմացութիւնն ենք պատկերացնում, քան նեղ անձ-  
նական կյանքը:

Ստորև հրապարակվող «Հիշարժան տարեթիւերի» հրապարակումը  
կարևոր է և մի այլ տեսակետից. Հովհաննես Մասեհյանի մասին գըր-  
ված գրեթե բոլոր հոդվածներում տեղ են գտել կենսագրական կարգի  
սխալներ: Եվ դա գլխավորապես այն պատճառով, որ հոդվածագրերն

իրենց ձեռքի տակ չեն ունեցել վավերագրերից քաղված հավաստի տվյալներ:

Մասեհյանի կյանքի և ստեղծագործութեան սույն հիշարժան տարեթիվերը մեծ մասամբ քաղված են իր նամակներից և արխիվային վավերագրերից, ուստի և հավաստի են, մյուսները հանվում են նրա մասին գրված հոդվածներից ու հիշողութիւններից, այդ պատճառով նվազ արժանահավատ են: Եթե սույն տարեթիվերը օժանդակեն բանասերներին հետագա ճշգրտումներ կատարելու և նոր մանրամասներ հայտնաբերելու,— մենք հասած կլինենք մեր նպատակին:

Շեքսպիրի հայ առաջին և ամենատաղանդավոր թարգմանիչը արժանի է, որ մենք նրա կյանքը ևս աջնպես իմանանք, ինչպես որ գիտենք նրա արվեստը, ինչպես որ պետք է իմանանք նրա արվեստը:

1 8 6 4

Փետրվարի 28—Թեհրանում, պալատական ոսկերչի ընտանիքում ծնվում է Հովհաննես Մասեհյանը, շոր անունը՝ Մերուհի Մասեհյան, մորը՝ Աննա Երվանդյան:

1 8 6 9

Աշուն—Գրաճանաչութիւն է սովորում Բարդուղիմեոս եկեղեցուն կից Մկրտիչ վարդապետի վարժարանում:

1 8 7 0

Աշուն—Ընդունվում է Հայկազյան նորարաց դպրոցը:

1 8 7 8

Հունիս—Ոսկե խաչով ավարտում է Հայկազյան դպրոցը:

Սեպտեմբեր—Մեկնում է Թավրիզ՝ իր մորեղբոր, Անտոն խան Երվանդյանի մոտ ուսման մեջ կատարելագործվելու:

1 8 8 1

Սեպտեմբեր—Մեկնում է Փարիզ և ընդունվում «Կուլեզ դ'Ֆրանս» դպրոցը:

1 8 8 4

Հունիս—Վերագտնում է Թեհրան:

Թարգմանչի պաշտոն է ստանում պարսից շահի պալատում:

Սեպտեմբեր—Ուսուցչական պաշտոն է ստանում Հայկազյան դպրոցում: Դասավանդում է ֆրանսերեն, աշխարհագրություն, պատմություն:

1 8 8 7

Մայիս—Վիկտորիա Թագուհու գահակալության 50-ամյակը շնորհավորող շահի դեսպանության կազմում, Թարգմանի պաշտոնով մեկնում է Լոնդոն:

1 8 8 8

Սեպտեմբեր—Զուլահեռարար ստանձնում է Հայկազյան դպրոցի օրինորդաց բաժանմունքի կառավարչի պաշտոնը:

1 8 9 1

Ջեննամուխ է լինում Շեքսպիրի «Համլետ» ողբերգության Թարգմանությունը:

1 8 9 2

Հունվար—Նշանակվում է Հայկազյան դպրոցի տեսուչ: «Համլետի» Թարգմանության ձեռագիրն ուղարկում է Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությունը:

1 8 9 3

Հունվար—Գրում է «Համլետ»-ի Թարգմանության առաջարանը:

Մարտ—Ավարտում է Շեքսպիրի «Ինչպես կուզեք» կատակերգության Թարգմանությունը:

Մարտի վերջ—Ավարտում է Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգության Թարգմանությունը:

Սեպտեմբեր—Ավարտում է Շեքսպիրի «Փոթորիկի» Թարգմանությունը:

Ավարտում է Շեքսպիրի «Մահրեթ» ողբերգության Թարգմանությունը:

1 8 9 4

Հունվար—Ընտրվում է Ուսումնասիրական ընկերության հայոց Թեհրանի ատենապետ, մնալով միաժամանակ դպրոցի տեսուչ:

Հունիսի 22—Լույս է տեսնում Շեքսպիրի «Համլետը» Հովհաննես Մասեհյանի Թարգմանությունը:

Գեկտեմբերի 2—Նիկոլայ Բ-ի գահակալությունը շնորհավորող պարսից դեսպանության կազմում ժամանում է Պետերբուրգ:

Գեկտեմբերի 15—Մոսկվայում, Գ. Քանանյանի տանը հանդիպում է ունենում մի խումբ հայ մտավորականների հետ (Գ. Խալաթյան, Վ. Սուրենյանց, Կ. Կուսիկյան, Ս. Մամիկոնյան և ուրիշներ):

Գեկտեմբերի 17—Պարսից դեսպանության ամբողջ կազմի հետ ներկա է լինում Մոսկվայի Ազնվականների ակումբում կազմակերպված հայկական երեկույթին:

## 1 8 9 5

Հունվար—Սկսում է Եքսպիրի «Արքա կիր» ողբերգության թարգմանությունը: Ապրիլ—«Մակբեթի» թարգմանության ձեռագիրն ուղարկում է Գ. Խալաթյանին:

Հուլիսի 17—Լույս է տեսնում «Ընչպես կուզեք» Մասեհյանի թարգմանությամբ:

Օգոստոս—Ավարտում է «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության թարգմանությունը և ուղարկում Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությանը:

Ավարտում է Եքսպիրի «Վենետիկի վաճառականը» կատակերգության թարգմանությունը:

Հոկտեմբեր—Նշանակվում է պարսից կառավարության արտաքին գործերի մինիստրության գրասենյակի պետ:

## 1 8 9 6

Ապրիլի 3—Լույս է տեսնում Եքսպիրի «Ռոմեո և Ջուլիետը» լուսանկատ Մասեհյանի թարգմանությամբ:

Սեպտեմբեր—Սկսում է թարգմանել Եքսպիրի «Օթելլո» ողբերգությունը:

## 1 8 9 7

Փետրվարի 19—Լույս է տեսնում Եքսպիրի «Վենետիկի վաճառականը» լուսանկատ Մասեհյանի թարգմանությամբ:

Մայիսի 17—Լոնդոն դնալիս կանգ է առնում Թիֆլիսում: Ի պատասխան Հայոց հրատարակչական ընկերության խմբագրական հանձնաժողովի առաջարկի, իր համաձայնությունն է տալիս որոշ փոփոխություններ կատարելու «Վենետիկի վաճառականի» թարգմանության մեջ:

Մայիս—Վիկտորիա թագուհու գահակալության 60-ամյակը շնորհավորող շահի դեսպանության կազմում մեկնում է Լոնդոն:

Հունիս—Լոնդոնից վերադառնալիս մի քանի օրով կանգ է առնում Թիֆլիսում: Հանդիպում տեղի մտավորականության հետ:

## 1 8 9 9

Մասնակցում է պարսկահայության կրթական գործը կարգավորող հանձնաժողովի աշխատանքներին:

Մասեհյանի անմիջական նախաձեռնությամբ և մասնակցությամբ Թեհրանում

Հիմնադրում է Քաղաքական դիտությունների բարձր դպրոց, որակից Մասնհյանք վարում է միջազգային իրավունքի և ընդհանուր պատմության ամբիոնները:

#### 1 9 0 0

Մասնակցում է այն ֆերմանի ստեղծման աշխատանքներին, որով պարսկահայությանը արտոնություններ է տրվում կրթական գործի ասպարեզում:

#### 1 9 0 1

Ապրիլ—Հ. Մասնհյանի և Հ. Առաքելյանի նախաձեռնությամբ Բարվում հրավիրվում է պարսկահայության կրթական գործին օժանդակող հանձնաժողովի նիստ:

Մայիսի օկիդր—Նշանակվում է Բեռլինի պարսից դեսպանի խորհրդական:

Մայիսի 24—Բեռլին մեկնելու ճանապարհին կանգ է առնում Թիֆլիսում:

Հուլիս—Էիվանագիտական ինչ-որ միսիայով լինում է Փարիզում: Փարիզի «Պելլի» հյուրանոցում Մասնհյանը «Սուրհանդակ» թերթի թղթակցի խնդրանքով ինտերվյու է տալիս իր շեքսպիրյան թարգմանությունների, ինչպես և մանկավարժական և դիվանագիտական գործունեության մասին:

Յգոստաւի վերջ—Գիվանագիտական ինչ-որ միսիայով լինում է Լոնդոնում:

#### 1 9 0 2

Փետրվար—Վիեննայի պարսից դեսպան նաբիմ խանի հետ դիվանագիտական գործերով լինում է Գրեզգենում, ուր մնում է 13 օր:

#### 1 9 0 3

Հուլիս—Բեռլինից անցնում է Քիսինգեն, ապա դիվանագիտական միսիայով՝ Փարիզ:

Նոյեմբեր—Ավարտում է «Օթելլոյի» թարգմանության վերամշակությունը:

#### 1 9 0 4

Մայիս—Ավարտում է «Մակրեթի» թարգմանության վերամշակությունը:

Հունիս—Գանուրի վրայով գնում է Կ. Պոլիս: Տեսնվում է Օրմանյանի հետ:

#### 1 9 0 5

Հունվար—Ավարտում է «Փոթորիկի» թարգմանության վերամշակությունը:

#### 1 9 0 6

Հունվար—Նշանակվում է Բեռլինի պարսից դեսպանի շարժե դ'աֆեր (հավատարմատար):

Հոկտեմբեր—Որպես պատվիրակ՝ Պարսկաստանի կողմից մասնակցում է ժողալին նա-

վերի և առափնյա ուղիով կայանների փոխադարձ կապի կանոններ մշակող միջազգային կոնֆերանսին:

Հոկտեմբերի վերջ—Հ. Առաքելյանից ետ է պահանջում «Օթելլոյի» թարգմանության ձեռագիրը:

1907

Ապրիլ—«Օթելլոյի» իր թարգմանության ձեռագրի վրա կատարում է նորանոր շտկումներ:

Մայիսի 1—Դիվանագիտական ինչ-որ միսիայով մեկնում է Փարիզ, որտեղ մնում է մոտ երեք շաբաթ:

Հունիս—Վերաթարգմանում է «Համլետը»:

1908

Որպես Պարսկաստանի պատվիրակ մասնակցում է գրականության վերաբերյալ կոնվենցիա մշակող Բեռլինում հրավիրված միջազգային կոնգրեսին:

1910

Մեզ անհայտ նպատակով լինում է Կ. Պոլսում:

1911

Հունվար—Դեսպանի պաշտոնակատար Մասեհյանը Բեռլինից ետ է կանչվում Քեհերան: Նշանակվում է արքունական դիվանապետ:

1912

Նշանակվում է պարսից դեսպան Բեռլինում:

1914

Օգոստոս—Իսահակյանի ընտանիքին ուղեկցում է դեպի Լոզան:

1916

Ապրիլ—Մասեհյանը ետ է կանչվում Բեռլինից:

Մայիսի վերջ—Գտնվում է Փարիզում:

Հունիսի վերջ—Մեկնում է Շվեյցարիա:

Յգուստու—Մի բանի օրով լինում է Լսզանում, որտեղ հանդիպում է Ավ. Իսահակյանի հետ:

Ապրիլ—Լինում է Լոնդոնում:

Նոյեմբեր—Իր թարգմանությունների հրատարակության կապակցությամբ լինում է Վիեննայում:

Մայիս—Իր թարգմանությունների տպագրության կապակցությամբ երկրորդ անգամ լինում է Վիեննայում:

Ամառ—Հանգստանում է Իլլի ափերին և Զալցբուրգում:

Սեպտեմբեր—Իր թարգմանությունների տպագրության առթիվ լինում է Վիեննայում:

Ընտրվում է Քեհրանի հայ համայնքի Համայնավարական վարչության նախագահ:

Ընտրվում է պարսից Մեջլիսի պատգամավոր:

Երկրորդ անգամ նշանակվում է պարսից դեսպան Լոնդոնում:

Ետ է կանչվում Լոնդոնից և նշանակվում է պարսից դեսպան Տոկիոյում:

Նոյեմբեր—Հիվանդության պատճառով ազատվում է դեսպանի պաշտոնից:

Ավարտում է «Կորիտյան» ողբերգության թարգմանությունը:

Նոյեմբերի 17—Քեհրան վերադարձի ճանապարհին, Խարրին բաղաբում վախճանվում է Հովհաննես Մասեհյանը:

Ապրիլի 1—Քեհրանից ոչ հեռու, Վանաբ հայաբնակ գյուղում մեծ հանդիսավորությամբ հողին է հանձնվում Հովհաննես Մասեհյանի աճյունը: